Ե.

Իգնատիոսի մի ուրիշ գործից հասել է մի հատակոտոր, Ա. Կորնթ. Ա. 28 – Բ. 3. «Զի զէն իմ խափանեսցէ . . . եւ ես տըկարութեամբ եւ երկիւղ», որ այժմ Էջմ. N 879/928. հց. ձեռագրի կազմի երեսն է։ Գրչութիւնը ճիշդ նոյնն է, ինչ որ Բագնայրի աւետարանինը, միայն սա քիչ փոքր է, և իւրաքանչիւր երեսը 16 տողից է բաղկացած։

Հատակոտորի ներքեւի լուսանցքում սքանչելի փոքր երկաթագրով գրիչը հետեւեալ նկատողութիւնն ունի. «Զիգնատիոս և զՔրիստափոր յաղաւթս յիշեսջիք»։ Քրիստափորը նորա աշխատակիցն է, թէ աշակերտը, չգիտենք, մենք կը տեսնենք, Խծկոնից աւետարանի յիշատակարանից, որ նա մի աշակերտ ունէր Յովսէփ անունով։

Զ.

Անշուշտ, զգալի է հայ արուեստի պատմութեան համար «Հռոմոսի ոսկեռուփ աւետարան»ի, ինչպէս և Վենետկի և Բագնայրի աւետարանների կարեւոր մասերի կորուստը, բայց մեղմանում է մասամբ այդ ցաւը, որ Իգնատիոսի մի երրորդ գործը, այժմ Ն. Ջուղայի Ամենա-



Պատկեր 7

փրկչի N 36 աւետարանը, անվնաս հասել է մեզ և հնարաւորութիւն կայ լիովին պարզել և գնահատել նորա արուեստը նաև պատկերագրական տեսակէտով։

Տ. Աւետիքեան Սմբատի «Ձեռագիրների ցուցակ Նոր Ջուղայի» անտիպ աշխատութիւնից. թ. 154. հետեւեալ մանրամասնութիւններն ունինք այդ ձեռագրի մասին. «Թերթք 406, 33×5×24 սմ., երկսիւն՝ 17 տող։ Մագաղաթ խիստ ճերմակ, մաքուր, մեսրոպեան երկաթագիր 0,5 սմ.,